ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<11>> հուլիսի 2025թ. N ՄՈ/685-Ա

ք. Արմավիր

**«ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի անդրազգային, ինչպես նաև կոռուպցիոն այլ բնույթի հանցագործությունների քննության վարչության քննիչի 2025 թվականի հուլիսի 7-ի N18-909կգ-25 գրությամբ ներկայացված քննիչի 2025 թվականի հունիսի 28-ի որոշումը.

**որոշում եմ՝**

1. «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Մանուկյանի պաշտոնավարման կասեցման պահից՝ 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև պաշտոնավարման կասեցման վերացումը պահպանել նրա պաշտոնը:
2. Կարինե Մանուկյանի պաշտոնավարման կասեցման պահից՝ 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև պաշտոնավարման կասեցման վերացումը, նրա վարձատրությունն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափի երկու երրորդին՝ 212203 (երկու հարյուր տասներկու հազար երկու հարյուր երեք) Հայաստանի Հանրապետության դրամին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-07-11 14:32:34 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ